Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-347-27.07.2022-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2-րդ հոդվածի 16-րդ մասի դ) ենթակետում «ավանդադրման համար» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հարկաբյուջետային և կառավարության պարտքի կառավարման քաղաքականությունների իրականացմանն աջակցելու (այդ թվում, կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի կառավարման) համար» բառերը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ

1) նոր՝ 14-րդ մասով.

«14. Հարկաբյուջետային և կառավարության պարտքի կառավարման քաղաքականությունների իրականացմանն աջակցելու (այդ թվում, կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի կառավարման) նպատակով պետական լիազորված մարմնի անվամբ գանձապետական միասնական հաշվում բացվում է կայունացման միջոցների ենթահաշիվ (այսուհետ՝ կայունացման հաշիվ):»:

2) նոր՝ 15-րդ մասով.

«15. Կայունացման հաշվի միջոցների նպատակային միջին մակարդակը, որը հաշվարկվում է որպես տվյալ տարվա աշխատանքային օրերի միջին օրական մնացորդ, պետք է գտնվի Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա բյուջետային ուղերձում

տվյալ տարվա համար կանխատեսված Համախառն ներքին արդյունքի մեկից մինչև երկու տոկոս միջակայքի սահմաններում:»:

3) նոր՝ 16-րդ մասով.

«16. Կայունացման հաշվի միջոցների համալրման և օգտագործման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքի հիման վրա: Կայունացման հաշվի միջոցների համալրման և օգտագործման կարգով սահմանվում են՝

ա) կայունացման հաշվի նպատակները.

բ) կայունացման հաշվի համալրման և օգտագործման կարգը.

գ) կայունացման հաշվի կառավարման կարգը.

դ) կայունացման հաշվի միջոցների նպատակային միջակայքի ստորին և վերին շեմերից թույլատրելի շեղումները:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Կառավարությունը սահմանում է կայունացման հաշվի միջոցների համալրման և օգտագործման կարգը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ

1) նոր՝ 14-րդ մասով.

«14. Հարկաբյուջետային և կառավարության պարտքի կառավարման քաղաքականությունների իրականացմանն աջակցելու (այդ թվում, կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի կառավարման) նպատակով պետական լիազորված մարմնի անվամբ գանձապետական միասնական հաշվում բացվում է կայունացման միջոցների ենթահաշիվ *(այսուհետ՝ կայունացման հաշիվ)։»։*

2) նոր՝ 15-րդ մասով.

«15. Կայունացման հաշվի միջոցների նպատակային միջին մակարդակը, որը հաշվարկվում է որպես տվյալ տարվա աշխատանքային օրերի միջին օրական մնացորդ, պետք է գտնվի Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար կանխատեսված *Համախառն ներքին արդյունքի* ~~ՀՆԱ-ի~~ մեկից մինչև երկու տոկոս միջակայքի սահմաններում։»։

3) նոր՝ 16-րդ մասով.

«16. Կայունացման հաշվի միջոցների համալրման և օգտագործման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքի հիման վրա։ Կայունացման հաշվի միջոցների համալրման և օգտագործման կարգով սահմանվում են՝

ա) կայունացման հաշվի նպատակները.

բ) կայունացման հաշվի համալրման և օգտագործման կարգը.

գ) կայունացման հաշվի կառավարման կարգը.

դ) կայունացման հաշվի միջոցների նպատակային միջակայքի ստորին և վերին շեմերից թույլատրելի շեղումները։»։

Հոդված 3. ~~*Եզրափակիչ և անցումային դրույթներ.*~~

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Կառավարությունը սահմանում է կայունացման հաշվի միջոցների համալրման և օգտագործման կարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-347-27.07.2022-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկվում է «կայունացման միջոցների ենթահաշիվ» բառերից հետո փակագծերում սահմանել նաև «կայունացման հաշիվ» տարբերակը՝ եզրույթների մեկնաբանման հստակությունն ապահովելու նպատակով:	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 14-րդ և 15-րդ մասերը երկու կողմից ներառել չակերտներում:	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է «ՀՆԱ» հապավումը փոխարինել եզրույթի ամբողջական տարբերակի հիշատակմամբ:	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերտառությունը հանել:	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է:
«ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Առաջարկվում է «5.1-րդ» գրելաձևը փոխարինել «5.1-ին» գրելաձևով	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետ	Առաջարկվում է «կայունացման միջոցների ենթահաշիվ» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ կայունացման հաշիվ)» բառերը:	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Առաջարկվում է «կայունացման միջոցների ենթահաշիվները» բառերը փոխարինել «կայունացման հաշիվը» բառով:	Առաջարկությունն ընդունվել է:	Առաջարկությունն ընդունվել է: